ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ 2020-2022ԹԹ. ԳԾ-Ի ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

(ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ)

Օրակարգում ներառված հարց

Խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ընտրություն:

Օրակարգի հարցի վերաբերյալ տեղեկատվություն

2020 թվականի մարտի 2-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ոազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի կատարումը համակարգող խորհրդի անհատական կազմը, գործունեության կարգը և հաշվետվությունների ներկայացման ձևաչափը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի N 282-Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանվել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ոազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի կատարումը համակարգող խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անհատական կազմը, գործունեության կարգը և հաշվետվությունների ներկայացման ձևաչափը:

Որոշման համաձայն՝ Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք կազմակերպվում են առնվազն եռամսյակը մեկ անգամ: Խորհուրդն, ի թիվս այլնի, քննարկում, առաջարկում և ընտրում է Խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ ՀԿ) ներգրավման մրցույթի երկրորդ փուլն անցած ՀԿ-ների թեկնածուներին:

Հաշվի առնելով COVID-19-ով պայմանավորված իրավիճակը՝ Խորհրդի առաջին նիստն անցկացվում է գրավոր ընթացակարգով: Նիստի օրակարգում ընդգրկված է մեկ հարց, այն է՝ Խորհրդի կազմում հասարակական կազմակերպությունների ընտրությունը: Այս առումով տեղեկացնում եմ, որ Խորհրդի

քարտուղարությունն իրականացրել է մրցույթի առաջին փուլի համար նախատեսված ընթացակարգը (ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքում ս.թ. հունվարին տեղադրվել էր համապատասխան հայտարարությունը[1], որին դիմել էին տասից ավելի հասարակական կազմակերպություն): Քարտուղարությունն ուսումնասիրել է ՀԿ-ների կողմից ներկայացված հայտերն աջակցող փաստաթղթերը և դրանց համապատասխանությունը սահմանված չափորոշիչներին: Արդյունքում, երկրորդ փուլ են անցել Ռազմավարությամբ նախատեսված չափորոշիչներին համապատասխանող 9 ՀԿ, որոնցից միայն 7-ի ներկայացուցիչները կարող են ընտրվել որպես Խորհրդի անդամ:

Հաշվի առնելով մարդու իրավունքների ոլորտային ներկայացվածությունն ապահովելու անհրաժեշտությունը՝ Արդարադատության նախարարությունն առաջարկել է հետևյալ ՀԿ-ների ներկայացուցիչների ընդգրկումը Խորհրդի կազմում՝

- Եվրասիա համագործակցության հիմնադրամ (Իզաբելլա Սարգսյան);
- Կանանց ռեսուրսային կենտրոն (Աննա Հովհաննիսյան);
- Բաց հասարակության հիմնադրամներ (Տաթևիկ Խաչատրյան);
- Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ (Մարիամ Անտոնյան);
- Խաղաղության երկխոսություն (Էդգար Խաչատրյան);
- Իրավունքի զարգացման կենտրոն (Լիլիթ Ալեքսանյան);
- Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների (Նինա Հակոբյան):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հասարակական կազմակերպությունների հայտերի գրանցամատյանը ու ներկայացված փաստաթղթերի ամբողջական փաթեթը ներկայացվել է Խորհրդի անդամներին և վերջիններիս կողմից առկայության դեպքում ներկայացվել են օրակարգի հարցի վերաբերյալ իրենց նկատառումները: Կից ներկայացվում է համապատասխան ամփոփաթերթը (Հավելված 1):

[1] http://moj.am/announcements/view/article/577

Ռազմավարության համաձայն՝ Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, ուստի, ստացված պատասխանների ամփոփմամբ Համակարգող խորհրդի կազմում ընդգրկվել են վերոնշյալ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

01.07.2020թ.

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Հավելված 1

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ			
Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	**Առարկության, առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխությունները**
1	2	3	4
ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ պարոն Կարեն Բրուտյան Մայիսի 26-ի 01.1/8-5/7686-2020	Դիտողություններ և առաջարկություններ չկան	Ընդունվել է ի գիտություն	
ՀՀ առողջապահության նախարարի առաջին	Պատասխան չի ստացվել		

տեղակալ տիկին Անահիտ Ավանեսյան			
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ պարոն Արման Ուդումյան 22 մայիսի 2020թ. ԱՈՒ/ԱՄ-2-2/32324-2020	Դիտողություններ և առաջարկություններ չկան	Ընդունվել է ի գիտություն	
ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ պարոն Արտակ Ապիտոնյան 22 մայիսի 2020թ.	Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի կատարումն ապահովող համակարգող Խորհրդի կազմում	Չի ընդունվել	Հասարակական կազմակերպությունների ներգրավման ընթացակարգը սահմանվել է 2019թ. դեկտեմբերի 26-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային

1110/10547-20	հասարակական կազմակերպությունների ներկայացվածության հարցում լիակատար անաչառություն և անկողմնակալություն ապահովելու, ինչպես նաև հետագա շահարկումներից խուսափելու նպատակով, ՀՀ ԱԳՆ առաջարկում է օգտագործել այն ձևաչափը, որով տեղի է ունենում ՀՀ կայուն զարգացման նպատակների խորհրդում ՀԿ-ների ներգրավման գործընթացը (ՀՀ վարչապետի ս.թ. ապրիլի 22-ի 479-Ա որոշման 2-րդ հավելվածը): Այսպես, այն բանից հետո երբ տեղի է ունեցել գործընթացի փաստաթղթային փուլը և զտվել են չափանիշներին համապատասխանող կազմակերպությունները,		ռազմավարության և դրանից բխող 2020-2022թթ ԳԾ հաստատելու մասին » ՀՀ կառավարության N 1978-Լ որոշման N 1 հավելվածի VI բաժնով:

	կազմակերպել դրանց ներկայացուցիչների հանդիպում և հնարավորություն տալ քննարկումների ճանապարհով ընտրել այն կազմակերպությունները, որոնք ներգրավվելու են խորհրդի աշխատանքներին: Ընդ որում որոշման կայացման եղանակը՝ կոնսենսուսային, թե մեծամասնական, ընտրում են ընտրական փուլի մասնակիցները հանդիպման սկզբում: Քննարկումների ճանապարհով կազմա-կերպությունների չընտրվելու պարագայում հանդիպման վերջում անցկացնել վիճակահանություն բոլոր մասնակիցների միաժամանակյա մասնակցությամբ:		
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և	Դիտողություններ և առաջարկություններ չկան	Ընդունվել է ի գիտություն	

սպորտի նախարարի տեղակալ պարոն Արթուր Մարտիրոսյան 22 մայիսի 2020թ. 27/14/12142-20			
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ պարոն Գաբրիել Բալայան 25 մայիսի 2020թ. ՊՆ/01/1676-2020	Դիտողությունների և առաջարկություններ չկան	Ընդունվել է ի գիտություն	
ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ պարոն Ավագ Ավանեսյանին	Պատասխան չի ստացվել		

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ պարոն Վաչե Տերտերյան 23 հունիսի 2020թ. ՍՊ/21.1/16687-2020	Դիտողություններ և առաջարկություններ չկան	Ընդունվել է ի գիտություն	
ՀՀ ոստիկանության պետի տեղակալ պարոն Տիգրան Եսայան 23 մայիսի 2020թ. 3/2/19717-20	Դիտողություններ և առաջարկություններ չկան	Ընդունվել է ի գիտություն	
ՀՀ ազգային ժողովի պատգամավոր տիկին Մարիա	Դիտողություններ և առաջարկություններ չկան	Ընդունվել է ի գիտություն	

Կարապետյան *23 հունիսի 2020թ.* *134/4307-2020*			
ՀՀ ազգային ժողովի պատգամավոր տիկին Անի Սամսոնյան *22 հունիսի 2020թ.* *133/4420-2020*	Դիտողություններ և առաջարկություններ չկան	Ընդունվել է ի գիտություն	
ՀՀ ազգային ժողովի պատգամավոր տիկին Շաքե Իսայանին *25 հունիսի 2020թ.* *139/4518-2020*	Դիտողություններ և առաջարկություններ չկան	Ընդունվել է ի գիտություն	
ՀՀ գլխավոր դատախազի	Դիտողություններ և	Ընդունվել է ի	

տեղակալ պարոն Դավիթ Մելքոնյան *23 մայիսի 2020թ.* *04/20/14469-2020*	առաջարկություններ չկան	գիտություն	
ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ պարոն Արսեն Այվազյան *23 հունիսի 2020թ.* *05/12/30224-20*	Դիտողություններ և առաջարկություններ չկան	Ընդունվել է ի գիտություն	
ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի տեղակալ պարոն Վլադիմիր Հովհաննիսյան *23 մայիսի 2020թ.* *18-4293q-20*	Դիտողություններ և առաջարկություններ չկան	Ընդունվել է ի գիտություն	

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ պարոն Հրաչյա Սարգսյան *25 մայիսի 2020թ.* *02/07-50050-h*	Դիտողություններ և առաջարկություններ չկան	Ընդունվել է ի գիտություն	
ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի ղեկավար պարոն Արտյոմ Սեդրակյան	Դիտողություններ և առաջարկություններ չկան	Ընդունվել է ի գիտություն	

19 հունիսի 2020թ. *05/15.4/2744-20*			
ՀՀ անվտանգության խորհրդի գրասենյակի քաղաքական, սոցիալական և տնտեսական վարչության պետ տիկին Աշխեն Բեգլարյան 23 մայիսի 2020թ. */39.1/25829-2020*	Դիտողություններ և առաջարկություններ չկան	Ընդունվել է ի գիտություն	
ՀՀ վարչապետի աշխատակազմի Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցչի	Ընդունվել է ի գիտություն Այդուհանդերձ, հիմք ընդունելով այն, որ ՄԻՊ ԳԾ-ով նախատեսված միջոցառումներն ընդգրկում են	Ընդունվել է ի գիտություն	Հասարակական կազմակերպությունների ներգրավման ընթացակարգը սահմանվել է 2019թ. դեկտեմբերի 26-ի «Մարդու իրավունքների

գրասենյակի ղեկավարի տեղակալ տիկին Աննա Շահնազարյան *16 հունիսի 2020թ.* */64.7/29311-2020*	բավական լայն ու միմյանցից տարբերվող ոլորտներ, ցանկալի կլիներ բացի ցանկում նշված թեկնածու հասարակական կազմակերպություններից Խորհրդի կազմում տեսնել նաև այլ ոլորտային համապատասխան հասարակական կազմակերպություններ՝ քաղաքացիական հասարակության առավել բազմակողմանի ներկայացվածություն ապահովելու նպատակով		պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող 2020-2022թթ ԳԾ հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1978-Լ որոշման N 1 հավելվածի VI բաժնով: Ընթացակարգի համաձայն՝ ցանկում ներառվել են ՀՀ արդարադատության նախարարություն դիմած և սահմանված չափորոշիչներին համապատասխանող ՀԿ-ների ներկայացուցիչները: